


Արծիվները բարձրունքներ են տենչում գրքի յուրաքանչյուր տող, ինչպես հեղինակ Ս. Նանագուլյանն է խոստովանում, գրել է արյունով ու արցունքով:

Եվ բնական է, այլ կերպ էլ չէր կարող վարվել քաջի և դրացին, և չափազանց դժվար է գրել հայրենիքի ազատության սուրբ գործի համար նահատակված հայ քաջորդիների մասին: Արցախյան պատերազմում զոհված լավագույն տղաներից 21-ի մասին է ակնարկների այս ժողովածու-գիրքը: Դրանցից են ազատագրական բանակի երկու հրամանատարները՝ Վլադիմիր Բալայանն ու Լեոնիդ Ազգալդյանը, հիրավի՛ երկու մեծ հայեր, նաև որոնց մարտավարական փայլուն գործողությունների հետ են կապված ազատագրական պայքարի հաջողություններից շատերը: Միսալ կլինի կարծել, թե այս գիրքը հավակնում է դառնալ նաև պատերազմական գործողությունների վերլուծական տարեգրություն: Ս. Նանագուլյանը զոհված ազատամարտիկների մասին գրելուց առաջ մեկ անգամ ևս հանդիպել է նրանց հարազատներին, պայքարը շարունակող մարտական ընկերներին, լսել նրանց պատմություններն ու հիշողությունները: Ահա թե ինչու այդքան անկեղծ են այդ ակնարկների հնչերանգն ու հուզական ասելիքը:

Միտումնավոր կերպով հեղինակն այս գիրքն անվանել է առաջին, քանզի ենթադրվում է, որ Արցախի զոհված ազատամարտիկների մասին ակնարկները ամփոփվելու են նոր գրքում:

Իբրև հավելում, գրքի վերջում տեղ է գտել մամուլում ժամանակին հրապարակված դաշնակցական բանաստեղծ Լևոն Համբարձումյանի հասցեին նամակը, որ Նանագուլյանը բանաստեղծին կշտամբում է արցախյան հարցի նկատմամբ բռնած ոչ ճիշտ քաղաքականության համար և արհամարհում բաց աչքերով նայել ճշմարտությանը խոսելով նույն ճշմարտության լեզվով:

Ս. Զալախյան